ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 հունիսի 2026 թվականի N 870 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 26-Ի N 815-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին, 4-րդ մասերը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի ապրիլի 29-ի N 477 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 815-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման նախաբանում ««Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը» բառերը փոխարինել ««Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը» բառերով.

2) որոշման 1-ին կետով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի (այսուհետ՝ ակադեմիա) կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի.

3) որոշումը 1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին կետով՝

«1.1. Հայաստանի Հանրապետության անունից հանդես եկող պետական կառավարման լիազոր մարմին սահմանել Հայաստանի Հանրապետության կրթության գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:».

4) 3-րդ կետի 1-7-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) խորհրդատվական, փորձագիտական ու գիտամեթոդական ծառայությունների մատուցում.

2) հրատարակչական, տպագրական գործունեության ծավալում ու դրա արդյունքների իրացում.

3) ակադեմիայի աշխատողների հանրային սննդի, հանգստի, բուժման, կենցաղի կազմակերպում ու սպասարկում:»:

2. Ակադեմիայի նախագահի պաշտոնակատար (այսուհետ՝ նախագահի պաշտոնակատար) նշանակել Աշոտ Սերոբի Սաղյանին:

3. Առաջարկել ակադեմիայի նախագահի պաշտոնակատարին սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ակադեմիայի կանոնադրության պետական գրանցումը.

2) բարձրագույն կրթության և գիտության ոլորտներում պետական կառավարման լիազոր մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) հաստատմանը ներկայացնել ակադեմիայի անդամների ընտրության մրցույթի կազմակերպման կարգը.

3) ակադեմիայի անդամների ընտրության արդյունքները հաստատելուց հետո հինգ օրվա ընթացքում ապահովել ընտրված անդամների մասին տեղեկատվության հրապարակումը և նրանց ընդգրկումն ակադեմիայի անդամների պաշտոնական ցուցակում:

4. Սահմանել, որ ակադեմիայի նախագահությունն իր գործունեությունը շարունակում է մինչև ակադեմիայի նոր նախագահության ձևավորումը:

5. Սահմանել, որ՝

1) «Բարձրագույն կրթության և գիտության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ, 44-րդ հոդվածի 8-րդ մասերի հիման վրա սույն որոշման հավելվածի 2-րդ, 32-րդ, 75-րդ, 84-րդ, 135–137-րդ կետերով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության գիտական կազմակերպությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների պատվավոր գլխավոր և պատվավոր առաջատար գիտաշխատողների վերաբերյալ դրույթներն ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ից.

2) մինչև ակադեմիայի նոր նախագահության ձևավորումը, ակադեմիայի կանոնադրության պետական գրանցումից հետո երկամյա ժամկետում կազմակերպվում է ակադեմիայի նոր ասոցացված, արտասահմանյան և պատվավոր անդամների ընտրություն՝ ակադեմիայի նախագահի պաշտոնակատարի ներկայացմամբ և բարձրագույն կրթության և գիտության ոլորտի պետական լիազոր մարմնի կողմից հաստատված՝ ակադեմիայի անդամների ընտրության մրցույթի կազմակերպման կարգին համապատասխան.

3) ակադեմիայի նախագահությունը ձևավորվում է ակադեմիայի նոր անդամների ընտրությունից հետո՝ ակադեմիայի կանոնադրությամբ սահմանված կարգով, ակադեմիայի անդամների ընտրությանը հաջորդող մեկամյա ժամկետում.

4) ակադեմիայի նախագահությունը կազմակերպում է ակադեմիայի նախագահի ընտրությունը, ակադեմիայի նախագահի ներկայացմամբ հաստատում է ակադեմիայի կառուցվածքը, հաստատում է ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց կազմը՝ ակադեմիային վերապահված գործառույթների իրականացումն ապահովելու նպատակով:

6. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին՝ ակադեմիայի կանոնադրության պետական գրանցումից

հետո եռամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության վարչապետի հաստատմանը ներկայացնել ակադեմիայի նախագահության անվանական կազմը:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

18.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ